

ԿՐՈՆԱԿԱՆ

ԻԳՆԱՏԻՈՍ ԵՊՍՒԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆ
ՂՈՒԿԱՍՈՒԻ ԳԼ. ԺԵ 9-ՅՁ

Արգ՝ եկաւ իր պատկերը փնտհելու որը անհաւատութեան, անգիտութեան խաւարով անյայտացած էր, ծածկուած ըլլալով անօրէնութեան և մեղքերու աղբին ներքև: Իր մարմինը պայծառ լոյս է Աստուածային բնութեամբ, որպէսզի անգիտութեան խաւարը փարատէ: Ըստ այնմ կըսէ – ես եմ լոյս աշխարհի: Իսկ Եսայի ըսած էր – անոնք որոնք խաւարին և մահուան ստուերին կամ երկիւղին մէջ նստած էին, անոնց բոլորին, լոյս ծագեցաւ: Ես. 9.2: Ծրագ վառեց և աւազանին շնորհօք և որդեգրութեամբ, մեղքերէն մաքրեց: Այս է նաև տունը աւելել. գտնելու Համար իր թագաւորական պատկերը որպէսզի նախնի մաքուր, արծաթեղէն բնութեան վերագարձնէ: Ուրախացաւ մեզ գտնելով, իր ուրախութեան Հաղորդ դարձնելով նաև մեզ:

9.- Եւ երբոր գտնէ, կը կանչէ բարեկամներն ու զրացիները ու կ'ըսէ անոնց – ուրախացէ՛ք ինծի Հետ, որովհետև գտայ կորսուած դրամս: Ի՞նչպիսի բառեր գտնեմ որպէսզի շնորհին և ուրախութեան Հաւասար ըլլայ: Ոչ միայն ես որ տկար եմ արտայայտութեամբ, այլ աւելի ճարտասաններն ալ անմերձեանալի են խորհուրդին, ամէն միջոց և Հնարք գործածեցին և անզօր մնացին: Անճառելւոյն վերաբերմամբ միայն Հիանալով, զայն փառաւորեցին. ըստ այնմ, ով խորք մեծութեան Աստուծոյ, առանց քննութեան է անոր դատաստանը. այսինքն “ով խորութիւն Հարստութեան Աստուածային իմաստութեան և գիտութեան: Անիմանալի են իր ճանապարհները, անպահաջելի են իր դատաստանները: Ո՞վ կրնայ Աստուծոյ միտքը իմանալ”: Հռոմ.11.13: Արդարև մեծ են Տիրոջ գործերը ըստ Դաւիթի և շատ խոր են իր խորհուրդները: Անզգամ մարդիկ չի ճանչցան և անմիտները խելամուտ չեղան, թէ ինչպէս խոնարհութեամբ իջաւ, մարմնացաւ, որպէսզի մեզ վերստին նորոգէ, զազրելի գործերու աղբին ներքև թաղուած պատկերը գտնելու և զարգարելու. մեր բնութեան արարիչը ցնծացաւ, մեզ կորուսեալներս գտնելով. ցնծութիւն եղաւ երկնաւորներուն և երկրաւորներուն միասին: Մեր փրկութեան Համար բոլորին Հայրը ուրախացաւ. վասն որոյ կ'ըսէ –

10.- Կ'ըսեմ ձեզի, այսպէս կ'ուրախանան Աստուծոյ Հրեշտակները մէկ մեղաւորի Համար որ կ'ապաշխարէ: Որպէսզի միայն Որդւոյն շնորհապարտ չըլլան արարածները, Հօրը խնամակալութիւնն ալ կը յիշեցնէ, խնամքի և զթութեան վերաբերմամբ: Քանզի Որդւոյն միջնորդութեամբ և պատարագով Հանցեալ Հաշտուիլ մարդոց Հետ, ներելու յանցանքները և նախնի կամ առաջին պատիւին արժանացնելու ցոյց տալով Հօրը անյիշատարութիւնը:

11.- Ըսաւ – Մարդ մը երկու որդիներ ունէր: Կրտսերը ըսաւ Հօրը – Հայր տո՛ւր բաժինս որ կ'իյնայ ինծի ինչքերէդ: Եւ Հայրը բաժնեց անոնց ինչքերը: Վայելչօրէն ներկայացուած առակին Հայրը Աստուած է որով մեզ կ'արժանացնէ որդի կոչուելու, Հօր ամենակատար բարձրութիւնը կը խոնարհեցնէ Հասկնալի ընծայելու Համար ըսելով թէ երկու որդիներ ունէր:

Ի՞նչպէս Հասկնանք երկու որդիներ ունենալը: Ոմանք կը կարծեն թէ կը խորհրդանշէ արդարներն ու մեղաւորները: Զգոյշ պէտք է ըլլալ միշտ ճիշտ մեկնելու Համար: Արդար և մեղաւոր երբ ըսնք, ի՞նչպէս պէտք է Հասկնանք այն որ երէց որդին այգիէն գալով, երգերուն ձայնը լսեց ու բարկացաւ. նաև թէ՛ պատուիրաններդ երբեք չի խախտեցի. ու մը ինծի չտուիր. անառակիդ Համար պարարտ եզը մորթեցիր: Արդ՝ արդարներէն ո՞վ երբևիցէ կրնայ յայտնել թէ՛ “պատուիրաններդ երբեք չի խախտեցի”: Որովհետև աշակերտիկ “ամենեքեան խոտորեցան ի միասին և անպիտանացան”: Ըստ առաքելին, նուազեցան շնորհէն, Հոռմ. 3.22 : Յանցանքին դատակնիքը ամենքին վրայ ալ ինկաւ, ուստի ամէնքը կարօտ են Քրիստոսի պատարագին և ձրի արդարացման: Ըստ այնմ, մաՀը թագաւորեց Ադամէն մինչև Մովսէս յանցագործներուն՝ ինչպէս անմեղներուն վրայ. Հոռմ. 5 : Մինչև Մովսէս ըսելով կը յայտնէ թէ, Քրիստոսի գալստեան խորհուրդները, մարգարէութիւնները շատցան, մաՀուան թագաւորութեան վերացման Համար: Ադամական մեղքը անոր բոլոր ծնունդներուն վրայ տարածուած ըլլալով, Քրիստոս արդարներուն և մեղաւորներուն Համար մեռաւ: Երէց են Հրեշտակները ժամանակագրական կարգով և պատուի բարձրութեան առնչութեամբ, զի մարդոց մասին գրուած է թէ զանոնք Հրեշտակներէն փոքր ինչ խոնարհ ստեղծեց: Ուրեմն կրտսերը կ’ըսէ Հօրը – տո՛ւր իմ բաժինս: Վասն որոյ արարչութեամբ ստացուածը բաժնեց որդիներուն միջև. իմանալիներուն, իմանալի շխարհը ի բնակութիւն և ի ժառանգութիւն. իսկ զգալեացս մեզ, դրախտը տուաւ ի բնակութիւն, ամենաբարի, անկարօտ, անմահ և անապական: Կրտսեր որդին ամենառատ պարգևատուէն այս ընդունելով, չի պահեց, այլ նենգաւոր օձէն փորձուելով փափաքեցաւ ժառանգութեան մեծ մասը ստանալ: Ինչ որ ունէր կորսնցուց: Աստուծոյ նմանիլ ուզեց և անասուած մնաց զբախտին մէջ, ուրեմն ունեցած փառքէն մերկացաւ:

13.- Քիչ օրեր ետք, կրտսեր որդին Հաւաքեց իր Հարստութիւնը և մեկնեցաւ Հեռաւոր երկիր մը: Քիչ օրեր ետք կ’ըսէ, յայտնելով թէ փափկութեան դրախտին վայելչութեան մէջ երկարատեան չմնաց, այլ սակաւ ժամանակ ետք պատուիրանազանց գտնուեցաւ, այս կը նշանակէ Հեռու երկիր երթալը: Բնաւ տեղ մը չի կայ որ Հեռու ըլլայ Աստուծմէ: “Ձի եթէ երկինք ելլեմ, Հոն ես, կ’ըսէ. եթէ դժոխք իջնեմ, Հոն ես մօտ ես: Եթէ թևերով թռիմ ծովեզերք Հասնիմ, Հոն պահապան աջդ կը տիրէ վրաս”: Տեղ մը չի կայ ուրեմն որ մեզ բաժնէ Աստուծմէ, բացի մեղքէն. ըստ այնմ, ձեր մեղքերը կը բաժնեն ձեզ Աստուծմէ, Ես. 59.2 : Արդ՝ այսպէս օձին գործակցութեամբ, այն որ աստուածանալ կամեցաւ, օտարացաւ Աստուծմէ, մերկանալով լոյսէն որով ծածկուած էր, ամօթալից ըլլալով, կքեցաւ, ծառերուն ետև ծածկուելով պահուրտեցաւ: ԱՀա կը Հասնի մաՀուան դատակնիքը. մաՀկանացու ըլլալով, կ’արձակուի անմահներու վայրէն և կ’իյնայ մաՀկանացուներու այս տեղը ուր ապականութեամբ ինկած ենք:

Իյնալով Հանդերձ, առաջին սխալին մէջ չմնաց այլ աւելցուց իր ամբարշտութիւնը բարեգործ Աստուծոյ դէմ, մինչև որ ըստ ամենայնի յիմարացեալ, ապշութեամբ անմտացանք: Այս պատճառաւ ալ կ'ըսէ –

13.- Հոն, վատնեց իր բոլոր հարստութիւնը որովհետև անառակութեամբ կ'ապրէր: Հարստութիւնը վատնել, Աստուածային շնորհներէն բոլորովին պակսիլն է: Դրախտէն արտաքուստից ետք, անմահ ըլլալով, թէև մահկանացու եղաւ, սակայն Հոգւոյն շնորհներուն կայծը մնացած էր իր վրայ որը եթէ կարենար պահել, իրօք երանելի պիտի ըլլար: Ինչպէս օրինակ Աբէլ, Ենոք, Ենոքը և Նոյ: Անառակ վարքով, զայն ևս կորսնցնելով, խեղճ ու թշուառական մնաց, թափուր՝ ամենաբարի Հոգւոյն պարգևներէն:

14.- Երբ ամէն բան վատնած էր, մեծ սով մը տիրեց այն երկրին մէջ և ինք զգաց իր չքաւորութիւնը: Ամէն ինչ սպառել, անշուշտ կը նշանակէ, բարեգործութիւններէ պակսիլ և իյնալ Աստուծոյ շնորհներէն: Աստուածգիտութեան ճշմարիտ ծանօթութիւնը կորսնցուց որ է սով սաստիկ: Աւելի տաժանելի և դառնագոյն չկրնար ըլլալ, ամենէն սոսկալին Հոգևոր սովն է: Տեսակ տեսակ ախտերէ յիմարացեալ, չեն իսկ անզրարաւոր, բայց անտանելի սովէն մաշած, խորապէս կը տագնապին: Ոչ միայն սոսկ սով, այլ սով սաստիկ. ըստ այնմ՝ «սովահար պիտի ընեմ ձեզի, ոչ սով Հացի և ծարաւ ջուրի, այլ սով Աստուծոյ խօսքը լսելու. Ամոգս 8.11:

15.-Գնաց և մտաւ ծառայութեան, այն երկրի քաղաքացիներէն մէկուն քով որ զինք ազարակ զրկեց խոզեր արածելու: Որո՞ւն մօտ գնաց. յայտնի է թէ ստոյգ Աստուածգիտութենէ վրիպած մարդու մը, յայտնքն յարեցաւ դեւերուն: Դեւերը մեղքերու ախտով կը լեցնեն մեր մարդկային բնութիւնը և անգիտութեան խաւարով, կ'օտարացնեն Աստուծմէ. այնուհետև պատիր խաբէութեամբ արհաւիրքներ կ'երևին, մարդոց կը հաւանեցնեն իրենց ծառայել: Այն որ մտիկ ըրաւ փորձողին, կերաւ ծառին պտուղէն, ուզելով Աստուծոյ պէս ըլլալ, դեւերը Աստուածացուց: Անոնց ծառայեց, յայտնքն թշնամիին, այն որուն դէմ պէտք էր կռուիլ: Ան ալ անյազ չարութեամբ խաբեց, անարգ վիճակի Հասցնելով մեզ: Աստուծոյ դէմ հակառակելով, ինկաւ, մեզ ալ իր Հետ վար քաշելու պատճառ եղաւ: Արարչի փառքին չէր կրնար վնասել, ուստի մեզ գտնելով իբրև պատկեր և նմանութիւն Աստուծոյ, Հնարքներով, նախատինքով և զազրելի գործերով թշնամանեց այդ կերպարանքը: Թագաւորը ատող մէկը չկրնալով անոր վնաս Հասցնել, ծառաներէն մին կամ նոյնիսկ զաւակը գտնելով, թագաւորին դէմ ունեցած ամբողջ չարութիւնը անոր վրայ կը թափէ, Համարելով որ թագաւորին վնաս կը Հասցնէ: Այսպէս ալ սատանան, մարդուն ձեռքէն բռնելով, թշնամանելով զայն, նախտեց արարիչը որ ստեղծուած էր իր պատկերին և նմանութեան Համաձայն: Ասոր Համար ալ կ'ըսէ –

15.- Ղրկեց իր ազարակը խոզեր արածելու: Այսինքն ամենայն զարշուժեամբ, անմաքուր վարք, վատթար ընթացքով շաղախուած. ուրեմն անասուններէն աւելի անսուրբ վիճակի մատուցած: Ոչ միայն այսչափ, այլ նաև Հաւանեցուց որ կենդանիներուն ամենէն զազրիւն զոհ մատուցանէ: Այս մասին Պողոս առաքեալ Հռոմէացիներուն գրած նամակին մէջ սքանչելապէս կը բացատրէ.– արարչին Հանդէպ պաշտամունքը, արարածներուն վերապահել: “Փոխանակեցին անեղծ Աստուծոյ փառքը, եղծանելի մարդու, թուգուններու, չորքոտանիներու, և սողուններու պատկերներով: Այս պատճառաւ, անոնց սրտի ցանկութիւններուն Համեմատ, Աստուած զանոնք մատնեց պղծութեան որուն մէջ կը նուաստացնեն իրենց մարմինը”: Հռով.1.23: Խոզարած ըլլալ ի՞նչ կը նշանակէ. անպատուութիւն, անմաքուր վարք, որը մատնացոյց ըրինք առաքեալին բացատրութեամբ: Ահաւասիկ թէ ինչու մեր Տէրը առակաւ ըսաւ թէ ազարակ զրկեց զայն խոզեր արածելու:

16.- Շատ փափաքեցաւ ստամոքսը լեցնել այն եղջիւրներով, զորս խոզերը կուտէին, սակայն ոչ ոք տուաւ իրեն: Ի՞նչ էր այս կերակուրը որ խոզերը ունէին և իրեն կը պակսէր: Սաստկացաւ սովը: Սովը բարեգործութիւններու և Աստուածային շնորհներու պակսին ու չարին ծառայութեան ներքև մտնելն է: Անասունները բնագոյով կամ բնութեան օրէնքներով կը շարժին: Մարդկային բնութիւնը այդ ևս կորսնցուց: Մարդը բանականութիւն ունէր, զԱստուած ճանչնալու և սիրելու, բարին ու չարը զանազանելու: Այսպէս խոզի կերակուրէն չկրցաւ օգտուիլ: Անասունները կը ճանչնան ամուսնութեան սահմանը, էգբեր արուներուն կը պատկանին և կը խնայեն իրենց ծնունդներուն. մարդիկ այս ևս լքեցին: ԶԱստուած կը ճանչնային ինչպէս եզն ու էջը իրենց մտուրն ու տէրը կը ճանչնան: Օրինաւոր մերձաւորութեամբ, բնութեան սահմաններուն մէջ չմնացին, այլ ըստ առաքեալին զարշ ցանկութեամբ և անկարգ խառնակութեամբ, անարգեցին բնութիւնը: Զի անոնց կիները բնական կարիքները փոխանակեցին անբնականին Հետ. նոյնպէս այրերը թողելով կիներու Հետ իրենց բնական կարիքները, միմեանց Հանդէպ ցանկութեամբ բորբոքեցան խայտառակարար: Ասկէ աւելի անօրինակ և վատթար չարիք չի կրնար ըլլալ. սա մծղնէականութիւն կը կոչուի: Ամէն տեսակ մեղք մարդկային մարմնէն դուրս է, իսկ սա Աստուծոյ տաճար մարմինը կ'ապակահէ: Իրենց զաւակները դեւերու բազիններուն առջև այրեցին: Անասունները այդպէս բան չեն ըներ, բայց մարդիկ իրենց տղաքն ու աղջիկները յօժարութեամբ զոհեցին դեւերուն: Արդ՝ այս է խոզերուն կերակուրը. իսկ անառակը այս իսկ չունէր: Արդարութեան բանաւոր և մտաւոր սնունդով չէ միայն որ մեր անձերը կը սնուցուին միայն, այլ նաև Հաւատքի Հացով Հաստատ կը մնան մեր Հոգիները: Խոզի նման անասունի առաքինութեան բնական կերակուրը պարտ էր ունենալ որը կը ներկայացուի իբրև եղջիւր. խոզերու բնական կերակուրն է այդ, ի ցանկութիւն վարիլ բնական օրէնքով, զազաններէ աւելի չար ըլլալ, անբնական, անօրէն խառնակութեամբ ապրելով:

Խոզէն աւելի անմիտ ըլլալով, անառակին բնական այդ կերակուրը չկար: Ամէնքը խորորելով անպիտանացան, ուստի ըսաւ ինքնիրեն –

17.- Որքան բանուորներ Տօրս տունը Հացի առատութեան մէջ են, իսկ ես Հոս սովամահ կը մեռնիմ: Ելլեմ երթամ Տօրս տունը և ըսեմ – Հայր, քու և երկիրքի դէմ մեղանջեցի:

Այն վիճակին մէջ որ կը գտնուէր, յիշեց իր նախկին բարետոհմութիւնը, անառակութեամբ ստացուած թշուառութեան նայեցաւ և ինքն իսկ տաղտկացաւ իր զարգիլի վարքէն, ապա որոշեց դառնալ իր արարչին: Խնամակալութենէն ճանչցաւ թէ գթած է իբրև Հայր: Այսքան չարութենէն և Աստուծոյ դէմ ըլլալէն ետք, Աստուած իրմէ ի բաց չդառնար այլ նախախնամութեամբ կը բարեգործէ, արեգակը կը ծագեցնէ: Կրնաք Հարցնել թէ անառակը ուրկէ՞ յանկարծ այս իմաստութիւնը ունեցաւ, ատեն մը երբ կուսպաշտութեան խոր խաւարին մէջ ընկղմած էր: Բնական գիտութեամբ: Դարձեալ առաքեալը յայտնապէս ցոյց կուտայ: Աստուծոյ գիտութիւնը անոնց յայտնի էր կ'ըսէ, որովհետև Աստուած իսկ յայտնեց անոնց. "արդարև աշխարհի սկիզբէն, անոր անտեսանելի կատարելութիւնները, յաւիտենական զօրութիւնն ու Աստուածութիւնը, Աստուծոյ գործերուն մէջ տեսանելի են իմացականութեան. այնպէս որ մարդիկ չեն կարող արգարանալ: Զի Աստուած ճանչնալով Հանդերձ, զինք չփառաւորեցին և անոր զոհութիւն չմատուցին ինչպէս որ պատշաճ է, ընդհակառակը նանրացան իրենց սին մտածումներով": Լուով. 1:19: Ուրեմն բանական իմաստութիւն ունէին, արարածներու բնութիւնը քննելու, երկնքի լուսաւորներու շրջապտոյտները գննելու: Կուրքերուն աստուած չըլլալը գիտէին: Արմատներ ճարակող կենդանիները կը տեսնէին, միմեանց մարմինը որսացող, պատառող և կերակրուող կենդանիները իրենց աչքերուն առջև էր. անոնք տուն չեն կրնար ունենալ, ժայռերու ծերպերուն մէջ կը բնակին, արևին և անձրևին տակ կը թափառին: Երբ երկնքի լուսաւորները կանոնաւոր շրջանառութեամբ իրենց ընթացքը կը կատարեն, անձնիշխան բնութեամբ չէ որ կ'ընեն, այլ ծառայական. ուրեմն անոնցմէ զեր ի վեր մէկը կայ որ կը կառավարէ զանոնք: Այս Հասկցնել կուզէ առաքեալը, երբ կ'ըսէ – Աստուծոյ գիտութիւնը յայտնի էր անոնց: Անառակը վերջապէս այս եզրակացութեան եկաւ, ճանչցաւ արարչին ու ամէնքին ստեղծիչը: Գիտնալով որ մարդ մտաւոր և բանաւոր բնութիւն ունի և անձնիշխան կամք, ճանչնալով նաև թէ պիտանի է իր արարչին, ուստի կ'ըսէ –

17.- Որքան բանուորներ Տօրս տունը Հացի առատութեան մէջ են, իսկ Հոս սովամահ կը մեռնիմ: Ո՞վ են այս վարձկանները կամ բանուորները: Կը թուի թէ երկնքի լուսաւորներն են. արարիչը դրաւ զանոնք իբրև վարձկան, մարդոց ծառայելու Համար. ի վերուստ իբրև վառած Զահ, կը բարեգործեն աշխարհը, պտուղ Հասունցնելով և խաւարը փարատելով. Հացալից են որովհետև գեղեցիկ են պայծառութեամբ և ամենայնիւ անկարօտ:

Իսկ մարդկային բնութիւնը թշուառացեալ, անգիտութեան խաւարին մէջ փակեալ, սովամահ է: Մեղքերու թմրութեանէն արթննալով, ուշաբերելով, որոշեց դառնալ իր բարերար Հօր, ըսելով -

18.- Ելլեմ երթամ Հօրս տունը և ըսեմ - “Հայր, մեղանչեցի երկնքի դէմ ու քու դէմդ. արժանի չեմ քու որդիդ կոչուելու. ընդունէ զիս որպէս մէկը քու գործաւորներէդ”: Այս ևս արարչին խնամքն է. այնպէս ստեղծեց մեզ որ թէև դիրակործան ենք մեղքերու Համար, սակայն նաև առանց ուսանելու ինքնագիտակից ենք ապաշխարելու: Ըստ որում այն անիրաւ տնեսը որուն գովեց տէրը որովհետև իմաստութեամբ գործեց: Ինչպէս նաև Նինուէացիք, լսեցին մարգարէէն կործանման մասին թէ Աստուած իրենց անօրէնութեան Համար, կորուստ կ'սպառնայ, իսկ ուղղութեան Համար, կ'ապրեցնէ: Եկաւ ուրեմն իր Հօր մօտ:

20.- Տակաւին հեռու էր, երբ Հայրը տեսաւ զինք և գուժը շարժեցաւ, վազեց դիմաւորեց զինք, նստուեցաւ անոր վիզը և Համբուրեց զինք: Հօրը կողմէն ինչպիսի մարդասիրութիւն. ամենաբարին է բնութեամբ: Որքան անսահման են խնամքները Քրիստոսի: Հօրը ծածուկ կամքը մեզ յայտնեց, ընտանեցուց մեզ, արարչին որդիները անուանելով, մենք որ ծառայ անուանուելու անգամ արժանի չենք: Ոչ ապաշխարութիւն, ոչ արտասուք և ոչ ալ Հառաչանք այլ միայն որոշեց գալ: Իսկ Հայրը տեսնելով ընդառաջ գնաց, վզին իյնալով, Համբուրեց, զի Հօր էութիւնն ու բնութիւնը սէր է: Մեղքերէ ազտտեալէն չզարչեցաւ, այն որ ամենամաքուրն է բնութեամբ: Արդ՝ այս անքննելի բարեաց տեսութիւնը առակաւ Յիսուսէ պատմուեցաւ. նոյնը ցոյց տրուեցաւ նաև Աբրահամի մօտ, յայտնապէս կատարուելով: Աբրահամ Հաւատաց Աստուծոյ և Հաւատքը արդարութիւն Համարուեցաւ: Անոնք որ Հաւատքով են, կ'օրհնուին Աբրահամ Հաւատացեալին հետ: Երբոր երթամ Հօրս կ'ըսէ, այն ատեն կ'արդարանայ: Իսկ Հօրը ընդառաջ գալը, բազմաթիւ անգամ ցոյց տրուած է: Ըստ Սուրբ Ստեփաննոսի “ Աստուած փառաց երեւցաւ մեր Հօր Աբրահամին, երբ տակաւին Խառանի մէջ բնակած չէր. ” Գործք. 7.2 : Աբրահամ Հաւատաց Աստուծոյ. զի Հայրը ընդ առաջ գնաց անառակին, Աբրահամի Հաւատքը արդարութիւն Համարուեցաւ: Աստուած ըսաւ իրեն - “եկիր քու երկրէդ և եկուր այն երկիրը որը ցոյց պիտի տամ քեզ”: Դարձեալ Աստուած երեցաւ Աբրահամին Մամբրէի կաղնիի ծառին մօտ. Աբրահամ ընդ առաջ գնաց, երկրպագեց. Ծննդ. 18. 2 : Սողոմի կործանումը, Իսահակի ծննդեան ակետիքը և նահապետին եղած ուրիշ աստուածաթոսութիւններ կը վկայեն իր սիրոյն և խնամքին մասին: Ուրեմն անառակը ըսաւ - Հայր մեզայ յերկինս և առաջի քո:

Թէև Հայրը անյիշաչար է սակայն անառակը կը խոստովանի իր ստահակութեան և յանցանքներուն մասին: Աստուած թողութիւն կուտայ, բայց մենք պէտք չէ մոռնանք մեր օրինազանցութիւնը:

Մեղայ յերկինս. երկինքը դբախտ կը կոչէ ուր առաջին յանցանքն ու դատապարտութիւնը եղաւ: Եւ առաջի քո, թաքուն և անյայտ տեղ չգործեց յանցանքները, այլ անգագամութեամբ, ամենատես աչքերուն առջև: Ջարհուրելի է անամօթաբար, յանդգնութեամբ և արհամարհանքով մեղք գործել: Անառակը կը խոստովանի. – “արծանի չեմ որդիդ կոչուելու, Հապա զիս գործաւորներդ մէկուն տեղը դիր”: Իսկ Հայրը ծառաներուն կ’ըսէ – բերէք ամենէն գեղեցիկ Հագուստը և Հագցուցէք իրեն: Այն որ անհնազանդութեամբ մերկացած էր, վերստին հնազանդութիւն կ’գգննու: Ծառաներուն կը Հրամայէ, թէ և ինք է միայն գեղեցնողը Ամենակատար բնութիւնը սպասաւորներու կարօտ չէ, սակայն առակին մէջ պատմուելու Համար յառաջ բերուած է, ինչպէս օրինակ, թագաւորները պաշտօնեաներով կը գործեն: Առաքեալներուն ալ Հրամայեց, զացէք Հեթանոսները մկրտեցէք, Հագուեցուցէք զանոնք յանուն Հօր և Որդոյ և սուրբ Հոգւոյն:

22.- Հագուեցնելէն ետք կը յաւելու, մատանին անցուցէք ձեռքին: Որպէսզի շնորհներէն անկեալը, շքեղանայ: Ըստ այնմ, Եսայի մարգարէն տեսնելով պարզակներուն առաւելութիւնը, ուրախանալով կ’ըսէ – “ անձս տիրջմով կ’ուրախանայ, զի փրկութեան Հանդերձ Հագուեցուց ինծի և ուրախութեան պատմուճան: Իբրև փեսայ, ինծի պսակ դրաւ և իբրև Հարս զարդարեց զիս”: Եսա.16.10 :

Այսպիսի զարդերով անառակը կը զարդարուի: Մատանին անոր ձեռքը դրէք կ’ըսէ: Թագաւորական պատկերով դրամին նման է: Որովհետև մատանիին վրայ քանդակուածը, թանկագին քարը, թագաւորական պատկեր կը նշանակէ, դրոշմելով ի տիպ թագաւորական կնիքին: Անոր ոտքերուն կօշիկ Հագուեցուցէք որպէսզի ամրացեալ, Համարձակօրէն կամակոր օձին գլխուն կոխէ. այն որ սկիզբէն իսկ Հրաման առած էր սպասելու և մեր զարշապարը խայթելու: Կօշիկ Հագուեցնելով, իշխանութիւն կուտայ օձին և կարիճին վրայ կոխելու: Թագաւորական պատուին կ’արժանացնէ և կը խրախուսէ զայն:

23.- Բերէք պարարտ եզը և մորթեցէք, որպէսզի ուտենք և ուրախանանք: Իրօք զարմանալի խորհուրդ որ բաւական է նոյնիսկ թանձրագոյն մտքերը Հիացնելու: Ի՞նչ բանի աւելի աքանչանանք. Հօ՞րը վրայ որ անառակացեալներուն փրկութեան Համար իր սիրելի որդին իբրև զուարակ կը նուիրէ որպէսզի զենուի կամ պատարագուի, ոչ թէ բռնադատուելով կամ տրամութեամբ այլ ուրախութեամբ կ’ըսէ – կերէք և ուրախ եղէք: Եսայի ևս այս մասին կը մարգարէանայ “ իբրև ոչխար զենուելու տարուեցաւ. իբրև որոջ, դահճին առջև անմուռնչ է.” Ես.53.7 : Ուրեմն բերէք պարարակ եզը. այսինքն մարմինը որ մեր բնութիւնը կը բովանդակէ և որ մեր մեղքերը բառնալու Համար զոչուեցաւ: Նահապետին այս օրինակը ստուերական կերպով ցոյց տրուեցաւ, երբոր իսահակ պատարագուելու կամ զոչուելու պատրաստուեցաւ.

Հոն երևցաւ անչարչարելիին չարչարանքները և անպատարագելի գառնուկին պատարագուիլը: Այս ամէնքը Հօրը հաճութեամբ տեղի ունեցաւ, վասն որոյ կ'ըսէ - կերէք և ուրախ եղէք:

24.- Որովհետև այս որդիս մեռած էր և վերապրեցաւ, կորսուած էր և գտնուեցաւ: Մեռած էր: Դառնագոյն մահն է այդ. մեղքին խայթոցը մահ է, հոգիներու ապականութեամբ, գեհնի արժանի: Իսկ կենդանութիւնը, շատ զարմանալի, Աստուածային և յաւիտենական կենդանութիւն:

25.- Երէջ որդին դաշտն էր: Վերադարձին, երբ տունին մօտեցաւ, լսեց նուազի և պարի ձայներ: Ծառաներէն մէկը կանչեց և Հարցուց անոր թէ ի՞նչ է այն: Ծառան պատասխանեց, հղթարդ եկաւ և հայրդ պարարտ եզը մորթել տուաւ, որովհետև իր որդին ողջ վերադարձաւ:

Երեց որդին անգաստանէն եկաւ. տեղի ունեցածին մասին տեղեակ չէր: Անոնք որոնք մօտ են Աստուծոյ, անոնց համար փրկութեան խորհուրդը ծածկուած էր, ըստ առաքեալին որ կ'ըսէ - «այս խորհուրդը որ դարերէ և սերունդներէ ի վեր կը մնար թաքնուած, Հիմա յայտնուեցաւ արգարներուն»: Կող.1.26: «Որպէսզի երկնային իշխանութիւններն ու զօրութիւնները Հիմա եկեղեցւոյ միջոցաւ իմանան Աստուծոյ բազմապատիկ իմաստութիւնը» Եփ. 3.10:

26.- Բարկացաւ և չուզեց մտնել: Մարդկօրէն այսպէս է, բայց Հրեշտակները աշիւ և դողութեամբ Աստուծոյ կը ներկայանան և չեն իսկ կրնար խօսիլ: Երբոր իմացան թէ մարդկային բնութիւնը միաւորեց իր Աստուածութեան և Աստուածացեալ մարդը նստաւ Աստուծոյ աջ կողմը, որուն երկնայիններն ու երկրայինները կ'երկրպագեն. այն ատեն հասկցան մարդկային ցեղին ազնուագգի ըլլալը: Իմանալիներէն ոչ ոք երկինք մտաւ, ուրեմն, «ոչ ոք երկինք ելաւ, եթէ ոչ այն որ իջաւ երկինքէն»: Առաքեալներուն ալ խոստացաւ թէ «ուր որ ես եմ, դուք Հոն, ինծի Հետ պիտի ըլլաք»: Հօրը ձայնելով կ'աղօթէր այսպէս - «կը փափաքեմ ուր որ ես եմ, ասոնք ևս ինծի Հետ ըլլան, որպէսզի փառքս տեսնեն»: Արդ, գեւերու խաղալիք մարդիկ, այսպէս բարձրացուեցան այնպիսի բարձրութեան որ Հրեշտակներուն ալ անմտանելի է:

29.- Այսքան տարիներէ ի վեր, ըսաւ ան, կը ծառայեմ քեզի և երբեք պատուիրաններդ չի խախտեցի, դուն ուլ մը չտուիր ինծի, բարեկամներուս Հետ ուրախանալու համար: Բայց երբ եկաւ այդ քու որդիդ որ անառակութեամբ վատնեց ինչքերդ և իր ծամանակը, պարարտ եզը մորթեցիր:

Նախանձին ախտը խօսեցնել տուաւ իրեն: Բայց նախախնամողն Աստուած, բոլորին բարեգութ չայրը, յատուկ խնամակալութեամբ, սփոփանքի խօսքերով կը մխիթարէ: Որդեակ, կ'ըսէ, դուն միշտ ինծի հետ ես, ինչ որ իմս է, ամէնքը քուկղ է: Մարմնաւորներուն յատուկ է փառասիրութիւն, ամբարտաւանութիւն, նախանձ. իսկ երկնայինները անկարօտ են բնութեամբ, այնքան բարձրութեան մէջ մնալով. այսպիսի պատիւ ոչ ճիգով, ոչ ալ տաժանելի աշխատանքով ձեռք ձգեցին, այլ ամենաուստ պարզաւտուէն ձրի շնորհ ընդունեցին: Իսկ Հէք և թշուառական մեր բնութիւնը թանձրացեալ մարմնին կապուած է, այդ բնութիւնը մեզի Հակառակ կը գործէ: Օձը խաբող է: Երբոր տիրանայ, կը բռնանայ, իմաստութիւնը կորսնցնել կուտայ, թմրութիւնը խորխորատը կը ծածկէ: Հետեանքը ծանր է ու տաժանելի: Բրտինք, սով, մերկութիւն, արցունք, Հառաչանք, բանտ, նախատինք, գետնախշտի, ևլն: Արդարները այս բոլորէն զերծ են: Ուստի արգարագատ չայրը, կորուսեալ եղբայրը դատող զաւկին՝ անիրաւ կարծիքներէն կ'ազատէ:

32.- Այս եղբայրդ մեռած էր և ողջացաւ. կորսուած էր, գտնուեցաւ: Ո՞վ այնքան խիստ և վայրագ կրնայ ըլլալ որ մեռելներէն ողջնցող մը տեսնելով, չուրախանայ, կամ երբ կորնցուցածը գտնէ: Այս մտածումը կը յայտնէ և այն որ Տէրը ըսաւ Փարիսեցիներուն – “առողջներուն բժիշկի կարիք չկայ, այլ Հիւանդներուն”: Հոս ալ ցոյց կուտայ որդւոյն պատարագութիւնը որպէսզի մեզ զնէ խաչին արեամբ: Գերեալներուն այս պէտք են և պատշաճ, ոչ թէ անոնց որոնք մնացին ի պատուի և ի պայծառութեան: Նոյնպէս ուրախանալու պարագան. ինչպէս մեռեալին կամ կորուստին վրայ կը տրտմինք, այսպէս և յարուցեալին կամ գտնուածին Համար պարտ է ուրախանալ:

ՋԱԻԷՆ ԱՌՔ. ՉԻՆՉԻՆԵԱՆ